ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 8 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 16.03.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2011 թվականի հունվարի 26-ին՝ աղքատության կայուն կրճատման և կրճատման տեմպերի աճը խթանելու նպատակով:

2. Համաձայնագրով Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 13.400.000 (տասներեք միլիոն չորս հարյուր հազար) Փոխառության հատուկ իրավունքին համարժեք գումարով վարկ: Վարկի մարումն սկսվում է 2021 թվականի փետրվարի 15-ից և ավարտվում 2030 թվականի օգոստոսի 15-ին:

3. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս են կազմում երկու ժամանակացույց, որոնցում սահմանված են ծրագրի գործողությունները և հետվճարման ժամանակացույցը, և մեկ հավելված:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- մարել վարկի մայր գումարը, ինչպես նաև սահմանված տոկոսագումարները՝ ժամանակացույցին համապատասխան,
- ֆինանսավորման չառհանված մնացորդի համար Ընկերակցությանը վճարել պարտավորության վճար, իսկ վարկի առհանված մնացորդի համար՝ սպասարկման տարեկան վճար,
- հայտնել Ծրագրի և դրա իրականացման նկատմամբ ՀՀ հանձնառության մասին և այդ նպատակով Ընկերակցության դիմումի հիման վրա ժամանակ առ ժամանակ տեսակետներ փոխանակել Հայաստանի Հանրապետության

մակրոտնտեսական քաղաքականության դաշտի և Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ,

- առհանում չկատարել առհանման եզակի տրանշից՝ քանի դեռ Ընկերակցությունը հավանության չի արժանացրել Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող Ծրագիրը և Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությունը։

5. Համաձայնագրով սահմանված են նաև վճարումների կատարման կարգն ու պայմանները, պարտավորությունների չկատարման դեպքում փոխհատուցման կարգը, Ծրագրի մոնիտորինգի և գնահատման կարգը, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու և դադարեցնելու կարգն ու պայմանները։

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Զարգացման քաղաքականության երկրորդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 ապրիլի 2011 թվականի
ՍԴՈ-950